

**ՀԱՅԱՍՏԱՆԻ 3 ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ
(ՏԱՎՈՒՇ, ԼՈՌԻ և ՇԻՐԱԿ)
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՄ**

**ՓՈՒԼ I - ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Ամիս Հոկտեմբեր 2021թ.

Պատվիրատու Ավստրիայի Չարգացման Գործակալություն

Խորհրդատու ԱՄ փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի ՍՊԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	ՆԱԽԱԲԱՆ	3
1.1	ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	3
1.2	ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ	3
1.3	ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	4
1.3.1	Տվյալների հավաքագրումը	4
1.3.2	Տվյալների մշակումը և ամփոփումը	4
2	ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	6
2.1	ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	6
2.2	ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	8
2.2.1	Համախառն արտադրանքը	8
2.2.2	Բուսաբուծության ենթա-ոլորտը	8
2.2.3	Անասնաբուծության ենթա-ոլորտը	10
2.2.4	Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնությունը	11
2.2.5	SWOT վերլուծություն	12
2.2.6	Գյուղատնտեսության օրենսդրական համակարգումը և կառավարման քաղաքականությունը	14
2.2.6.1	Կառավարման օրենսդրական համակարգը	14
2.2.6.2	Գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունը	16
2.2.7	Գյուղատնտեսական զարգացման ծրագրերը	18
2.3	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.....	21
2.3.1	Ներածական	21
2.3.2	Մթնոլորտային օդի պահպանության խնդիրները	21
2.3.3	Զրային պաշարների պահպանման խնդիրները.....	22
2.3.4	Հողերի պահպանության հիմնախնդիրները	23
2.3.5	Անտառների պահպանության խնդիրները	24
2.3.6	Ընդերքի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրները	25
2.3.7	Կենսաբազմազանություն և կենսառեսուրսներ, հատուկ պահպանվող տարածքներ.....	25
2.3.8	Այլընտրանքային էներգիայի օգտագործման և էներգախնայողության խնդիրները.....	26

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԱԶԳ	Ավստրիական Չարգացման Գործակալություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Չարգացման Գործակալություն
ԳԶՄՅ	Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամ
ԳԶՄՌ	Գյուղատնտեսության Չարգացման Մարզային Ռազմավարություն
ԳՏ	Գյուղատնտեսություն, գյուղատնտեսական
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԿԳԳ	Կանաչ / Կայուն Գյուղատնտեսության Գործողություններ
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԽ	Մարզային Աշխատանքային Խումբ
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՊՈԱԿ	Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն
ՎԿ	Վիճակագրական Կոմիտե
ՓԲԸ	Փակ Բաժնետիրական Ընկերություն
GAIA	Green Agriculture Initiative in Armenia (Կանաչ Գյուղատնտեսության Ծրագիրը Հայաստանում)
SWOT	Strengths, Weaknesses, Opportunities, & Threats (Ուժեղություններ, Վեպություններ, Հարավանքներ, և Թրեյթներ)

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«ԵՄ Կանաչ գյուղատնտեսության Նախաձեռնությունը Հայաստանում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորվում է Եվրոպական Միության (ԵՄ) կողմից և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության կողմից: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից, Հայաստանում ՄԱԿ-ի Չարգացման Ծրագրի հետ համատեղ: Կառավարության կողմից գործընկերն է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ): **Ծրագիրն աջակցում է կայուն, ներառական, նորարարական և շուկայահեն ագրոբիզնեսի զարգացմանը, մասնավորապես՝ Հայաստանի հյուսիսային մարզերում Շիրակում, Լոռիում և Տավուշում:**

Ծրագրի համատեքստում նախատեսվում է օժանդակել գյուղատնտեսական զարգացման պլանավորման գործողությունների իրականացման բարելավմանը մարզային մակարդակում, քանզի դա թույլ կտա համագործակցային միջավայրում առավելագույնս հզորացնել Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի տեղական գործընկերների կարողությունները պլանավորման բնագավառում: **Սույն առաջադրանքի իրականացման միջոցով և արդյունքում նախատեսվում է մշակել Գյուղատնտեսության զարգացման մարզային ռազմավարություններ (ԳՉՄՌ), որոնց կիրառությունը թույլ կտա ուղղորդել մարզային իշխանություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին գյուղատնտեսությանն ուղղված իրենց գործողություններում, ինչպես նաև բարելավել մարզային և տեղական իշխանությունների պլանավորման և պլանավորված գործողությունների իրագործման կարողությունները:**

ԳՉՄՌ-ների ներքո նախատեսվում է անդրադառնալ գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացման հետևյալ ասպեկտներին.

- Գյուղացիական տնտեսությունների կառավարման բարելավում և արդյունավետություն,
- Տեղական և մարզային մակարդակներում նորարարական, եկամտաբեր, ճկուն, դիմակայուն գյուղատնտեսական զարգացման քաղաքականության և մոտեցումների ընդունում և կիրառում,
- Բարձրարժեք մշակաբույսերի և նոր արժեշոյաների հայտնաբերում,
- Բարձրարժեք արտադրության մեջ նոր տնտեսվարողների, ֆերմերների և ներդրողների ներգրավում,
- Հանրության շրջանում կրթության և տեղեկատվության փոխանակման գործընթացի բարելավում,
- Տեղական և արտահանման նոր շուկաների բացահայտում,
- Անդրադարձ բնության պահպանության և կլիմայի փոփոխությանն առնչվող հարցերին, որոնք վերաբերվում են նաև գյուղատնտեսության ոլորտին:

1.2 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

Սույն առաջադրանքի հիմնական կետերը հետևյալն են.

- Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում գյուղատնտեսության ոլորտի ընդհանուր վերլուծություն - նկարագրություն: Այն պետք է ներառի ընթացիկ խնդիրների և հնարավորությունների սահմանումը, դրանց լուծման ուղղությամբ առաջարկվող գործողությունները, դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:
- Ազգային և մարզային մակարդակներում գյուղատնտեսության ոլորտի կառավարման իրավական համակարգը, կիրառվող քաղաքականությունը, իրականացվող ծրագրերը:

- Կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման գալիք 5 տարիների հայեցակարգը առաջարկում է կենտրոնանալ նորարարական մոտեցումների և գործողությունների վրա, զարգացման խոչընդոտները հաղթահարելու և ընձեռված հնարավորությունները լավագույնս կյանքի կոչելու համար:
- ԳԶՄՌ-ների պատրաստում Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի համար: Այն կներառի գյուղատնտեսության զարգացման հայեցակարգային տեսլականը, ինչպես նաև առաջարկներ, որոնք կենտունակ և դիմակայուն զարգացում կապահովեն:
- Կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման ռազմավարական գործողություններ և դրանց իրականացում, ներառյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը միտված փորձնական և մոդելային ծրագրերի իրականացում:

1.3 ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.3.1 Տվյալների հավաքագրումը

ԳԶՄՌ-ների պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

1. Փաստաթղթերի և երկրորդային տեղեկատվության ուսումնասիրություն: Ուսումնասիրվել է ՀՀ և Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի գյուղատնտեսության և հարակից այլ ոլորտների վերաբերյալ տեղեկություններ՝ ներառյալ վիճակագրություն, զարգացման ռազմավարական փաստաթղթեր, տարբեր զարգացման նախաձեռնությունների նկարագրություններ և այլն: Համադրումների միջոցով վեր են հանվել զարգացման հիմնական միտումները, բացահայտվել են խնդիրները, դիտարկվել են հնարավոր լուծումները և այլն:
2. Ինտենսիվ խմբային քննարկումներ մարզերի աշխատանքային խմբերի և այլ շահագրգիռ տեղեկացված անձանց հետ: Այս միջոցառումների ընթացքում բացահայտվել և սահմանվել են մարզերի գյուղատնտեսության զարգացման տեսլականները, հիմնախնդիրները և նպատակները, կանաչ / կայուն գյուղատնտեսության զարգացման հիմնահարցերը, զարգացման առաջատար և գերակայելի ենթա-ոլորտները և այլն:
3. Դեմ առ դեմ անհատական քննարկումներ մարզային և տեղական իշխանությունների ներկայացուցիչների, առաջատար ֆերմերների, զարգացման նախաձեռնություններ իրականացնող մասնագետների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են մարզերում գյուղատնտեսական զարգացման հիմնահարցերը:
4. Համայնքային այցելություններ՝ բացահայտված և սահմանված խնդիրների տեղական մակարդակում հավաստման նպատակով: Այցելությունների ընթացքում տեղեկություններ են հավաքագրվել հավանական փորձնական մոդելային բիզնես գաղափարների վերաբերյալ:

1.3.2 Տվյալների մշակումը և ամփոփումը

Հավաքագրված տեղեկատվության և առանձին տվյալների մշակումն ու ամփոփումն իրականացվել է հետևյալ մեթոդների կիրառմամբ.

1. Հավաքագրված տեղեկատվության համակարգում և դասակարգում, համապատասխան տվյալների շտեմարանների պատրաստմամբ: Տվյալների համակարգվածությունը զգալիորեն հեշտացրել է դրանց հետագա ստուգման և մշակման գործողությունների իրականացումը:
2. Հավաքագրված և համակարգված տեղեկությունների և տվյալների ստուգում, հավաստում և տրիանգուլիացիա¹: Այս գործողության արդյունքում առկա տեղեկատվության միջից հանվել են լուրջ հիմնավորում չունեցող, սուբյեկտիվ բնույթի, իրականությանը չհամապատասխանող տվյալները և կարծիքները:
3. Տվյալների վերլուծությունը և ամփոփումն իրականացվել են տեղեկությունների ստուգումից և հավաստումից հետո՝ ի հայտ բերելով հիմնական միտումները, կատարելով

¹ Տրիանգուլիացիա - տարբեր մեթոդներով մի քանի (առնվազն երեք) աղբյուրներից ստացված տվյալների վերլուծություն:

համապատասխան եզրահանգումներ, սահմանելով խնդիրներ և առաջարկելով արդյունավետ լուծումներ դրանց համար:

Իրականացված վերլուծության և ամփոփումների հիման վրա նախատեսվում է պատրաստել ԳՉՄՌ-ների բաղկացուցիչ մաս հանդիսացող 3 հիմնական հաշվետվություններ.

- 1) Մարզերի ընդհանուր գյուղատնտեսական նկարագիրը
- 2) Մարզերի ԳՉՄՌ-ները,
- 3) Մարզերի ԳՉՄՌ-ների իրականացման գործողությունների ծրագրերը:


Սույն փաստաթղթում հաջորդիվ ներկայացնում ենք առաջին հիմնական հաշվետվությունը:

2 ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ²

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Լոռու մարզը գտնվում է ՀՀ հյուսիսում: Պետական սահմանով սահմանակից է Կրաստանի Հանրապետությանը: Արևմուտքից սահմանակից է Շիրակի, արևելքից՝ Տավուշի, հարավից՝ Կոտայքի և Արագածոտնի մարզերին: Արտաքին սահմանների երկարությունը կազմում է 110 կմ: Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում 3,799 կմ² տարածքով և զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը:

Սույն փաստաթուղթը պատրաստելու պահին մարզում առկա են 56 համայնքներում կենտրոնացված 8 քաղաքային (մարզկենտրոն Կանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ) և 122 գյուղական բնակավայրեր. համայնքների խոշորացման գործընթացը շարունակվում է: Սահմանամերձ է համարվում 5 բնակավայր (Ջիլիգա, Պաղաղբյուր, Ապավեն, Արծնի, Ձորամուտ)³: Լոռու մարզի մշտական բնակչության թիվը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է մոտ 212,6 հազ. մարդ (46.3% տղամարդ և 53.7% կին), որից մոտ 87,2 հազ. մարդ բնակվում է գյուղական բնակավայրերում⁴: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է Հայաստանը Կրաստանին կապող գլխավոր երկաթուղին:



Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ և ունի ոչ հարթ ռելիեֆ՝ տարածքի մոտ 80% զբաղեցնում են լեռնաշղթաները եւ խոշոր լեռները: Մարզի տարածքում են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Կիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը (154կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցագետ եւ Փամբակ վտակներով: Հարուստ է հանքային աղբյուրներով: Մարզի տարածքում է գտնվում Մեծավանի ջրամբարը, որի հայելու մակերեսը կազմում է 330հա:

² Խմբագրված քաղվածք «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունից»

³ Լոռու մարզպետի 2020 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն

⁴ Աղբյուրը (Սաև սույն բաժնում հետայսու ներկայացված վիճակագրական տեղեկությունների համար)՝ «ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ տնտեսական համառոտ բնութագիրը», ՀՀ ՎԿ, 2020թ.

Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա: Ծովի մակերևույթից ամենաբարձր կետը Աչքասար լեռան գագաթն է (3 196 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 375 մ):

Կլիմայական պայմանների առումով մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին եւ բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը -4.8°C -ից մինչև $+18^{\circ}\text{C}$ ամռանը: Ի տարբերություն Շիրակի և Տավուշի մարզերի, այստեղ տեղումները բավականին շատ են՝ տարեկան 600-700մմ: Նախալեռնային գոտում կլիման մերձարեւադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը 2021թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում են 250,904.3 հա, որը կազմում է մարզի ընդհանուր տարածքի 66%-ը: Դրանց մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (145,618.3 հա կամ 58%), իսկ գյուղատնտեսական նշանակության հողերի 16.8%-ը (42,001.7 հա) կազմում են վարելահողերը⁵: Բնակավայրերի հողերը կազմում են 16,503.2 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 2,404.3 հա, ջրային հողերը՝ 2,606.6 հա, անտառային հողերը՝ 100,603.0: Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 9,612.1 հա (22.8%), որոնք հիմնականում գտնվում են Սպիտակի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջաններում: Առանձնահատուկ ուշադրության են արժանի բարելավման կարիք ունեցող հողերի ցուցանիշը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի⁶, Լոռու մարզում 2020թ. դրությամբ բարելավման կարիք ունեցող հողերի ծավալը 7,674.5հա, որը կազմում է Հայաստանի ընդհանուր տարածքի 2%-ը: Ի դեպ՝ այս ցուցանիշը կտրուկ անել է 2019թ.՝ 980 հա-ից հասնելով 7,808.2 հա:

Մարզի տարածքում տիրապետում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101,279.6հա, որից անտառածածկ է 85,799.6 հա-ն: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը կամ հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները:

Մարզում առկա են 3 արգելավայրեր («Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»), ընդհանուր՝ 17,576 հա մակերեսով, 2 բուսաբանական այգի: Անձնագրավորված են 9 բնության հուշարձան՝ 165 հա ընդհանուր մակերեսով:

Մարզում զգալի տարածում ունեն նաև սողանքները, որոնք ներկայացնում են ինչպես առանձին վտանգ, այնպես էլ մեծացնում են սեյսմիկ ռիսկը: Մասնավորապես՝ Փամբակի լեռնաշղթայի Վանաձոր քաղաքին հարող լանջերը, քաղաքի գրեթե ամբողջ երկարությամբ, սողանքավտանգ են:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին:

⁵ Լոռու մարզպետարանի տվյալներ

⁶ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2020թ

2.2 ՄԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ⁷

2.2.1 Համախառն արտադրանքը

Վիճակագրական տվյալների վերլուծությունը փաստում է, որ Լոռու մարզում, ՀՀ ընդհանուր ցուցանիշների, ինչպես նաև Շիրակի և Տավուշի մարզերի պես, վերջին տարիներին արձանագրվել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի անկում: Ցուցանիշները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 1 - Գյուղատնտեսության համախառն արտադրանքը⁸

Մարզ	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, միլիարդ դրամ			Բուսաբուծության համախառն արտադրանքը, միլիարդ դրամ			Անասնաբուծության համախառն արտադրանքը, միլիարդ դրամ		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Լոռի	72.7	68.5	67.2	21.6	21.6	20.4	51.6	46.9	46.8
ՀՀ	892.9	853.3	833.3	415.8	410.9	399.5	477.1	442.4	433.8

Նման անկման պատճառներն, ինչպես արդեն նշվեց, ընդհանրական են ողջ երկրի համար և բացառություն չեն նաև Լոռու մարզի համար: Դրանք են բնակլիմայական պայմանները, անբավարար ենթակառուցվածքները (օրինակ՝ ոռոգում), ինչպես նաև արտաքին մարտահրավերները (համավարակ, պատերազմ և այլն): Լոռու մարզի գյուղատնտեսության ոլորտի նկարագիրը ավելի մանրամասն ներկայացված է ստորև:

2.2.2 Բուսաբուծության ենթա-ոլորտը

Ստորև ներկայացված է բուսաբուծության տարածքների դինամիկան լոռու մարզում 2018-2020 թթ. կտրվածքով:

Աղյուսակ 2 - Հողերի մշակության տարածքները Լոռու մարզում, ըստ մշակաբույսերի, հա⁹

Մշակաբույսեր	2018թ.	2019թ.	2020թ.
Հացահատիկ	11,249	10,245	10,559
Հատիկընդեղեն	291	242	268
Տեխնիկական	105	72	95
Կարտոֆիլ	3,596	3,432	3,510
Բանջարանոցային	1,338	1,303	1,296
Բոստանային	7	9	7
Կերային	7,097	6,546	5,811
Ծաղիկ	0	0	0
Բնական խոտհարք	23,035	25,188	25,216
Ընդամենը	46,697	47,069	46,837
Բազմամյա տնկարկներ ¹⁰	2018թ.	2019թ.	2020թ.
Պտուղ	2,198	2,199	2,191
Հատապտուղ	112	116	126
Խաղող	67	67	67
Ընդամենը	2,377	2,382	2,384

Լոռու մարզում գյուղացիական տնտեսությունները ավանդաբար մասնագիտանում են հացահատիկի, կերային մշակաբույսերի, կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի մշակության մեջ: Վերջին երեք տարիներին հիմնական մշակաբույսերի մշակության տարածքների կտրուկ փոփոխություններ չեն արձանագրվել, չնայած ընդհանուր առմամբ առկա է դրանց մշակության տարածքների նվազում: Նույն ժամանակահատվածում գրեթե նույն չափով ավելացել են բնական խոտհարքի տարածքները:

Պտղի և հատապտղի մշակության տարածքները ևս մնացել են հարաբերականներուն անփոփոխ՝ թեթև

անկում է նկատվում պտղի մշակության տարածքների առումով, որը փոխհատուցվում է

⁷ Գյուղատնտեսական գործունեության ցուցանիշները վերցվել են ՀՀ ՎԿ տվյալներից, 2018-2020թթ. կտրվածքով

⁸ Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, ՀՀ ՎԿ, 2018-2020թթ.

⁹ ՀՀ ՎԿ հրապարակումներ, «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018-2020 թթ.»

¹⁰ Ներառյալ նորատունկ այգիները

հատապտղի մշակության տարածքների աճով: Ուշադրության է արժանի թերևս միայն հատապտղի (հիմնականում ազնվամորու) մշակության տարածքների աճը վերջին տարիներին, որում գործունե ֆինանսական մասնակցություն և ներդրում են ունեցել նաև զարգացման միջազգային ծրագրերը: Այս ամենը հանգեցրել է բազմամյա տնկարկների մշակության տարածքների մի փոքր ավելացման: Բուսաբուծության ոլորտի արտադրանքի քանակության դինամիկան վերջին ժամանակահատվածում ներկայացված է ստորև:

Աղյուսակ 3 - Բուսաբուծության արտադրանքի քանակի միտումները Լոռու մարզում ըստ մշակաբույսերի, ցենտներ¹¹

Մշակաբույսեր	2018թ.	2019թ.	2020թ.
Հացահատիկ	358,746	256,848	288,369
Հատիկընդեղեն	4,192	5,543	6,304
Տեխնիկական	739	746	1,609
Կարտոֆիլ	524,292	493,390	592,919
Բանջարանոցային	180,927	149,739	159,251
Բոստանային	986	549	769
Կերային	269,828	230,804	203,805
Ծաղիկ (հազար հատ)	11	1	0
Բնական խոտհարք	566,533	518,908	455,802
Ընդամենը	1,906,254	1,656,528	1,708,828

Բազմամյա տնկարկներ ¹²	2018թ.	2019թ.	2020թ.
Պտուղ	51,140	51,700	58,732
Հատապտուղ	2,895	2,658	3,144
Խաղող	1,460	1,047	878
Ընդամենը	55,495	55,405	62,754

Նախորդ երեք տարիների ցուցանիշներով դժվար է բավարար հիմնավորված եզրահանգումներ կատարել արտադրանքի քանակի միտումների մասին: Հարկ է միայն նշել որոշ մշակաբույսերի՝ հացահատիկի, բանջարանոցային, բոստանային, կերային 2019թ. արտադրության ծավալների կտրուկ նվազման մասին, ինչը սակայն կարող է պայմանավորված լինել տվյալ տարվա բնակլիմայական առանձնահատկություններով: Աճ է նկատվում հատիկընդեղենի մշակության

բնագավառում, չնայած դրանց ցանքատարածությունների ընդհանուր նվազմանը: Ի տարբերություն մշակաբույսերի, արտադրության ծավալների անկման միտումներ չեն նկատվել պտղի և հատապտղի արտադրության առումով՝ ի տարբերություն խաղողի:

Աղյուսակ 4 - Հիմնական մշակաբույսերի բերքատվությունը Լոռու մարզում, ցենտներ/հա

Մշակաբույսեր	2018թ.	2019թ.	2020թ.
Հացահատիկ	32.0	25.1	27.5
Հատիկընդեղեն	14.5	22.9	23.5
Տեխնիկական	8.8	7.2	9.5
Կարտոֆիլ	145.8	158.9	168.9
Բանջարանոցային	135.2	114.9	122.9
Բոստանային	140.9	61.0	109.9
Կերային	38.0	35.0	36.2
Բնական խոտհարք	24.6	20.6	18.1

Պտուղ, հատապտուղ և խաղող	2018թ.	2019թ.	2020թ.
Պտուղ	26.0	25.9	29.0
Հատապտուղ	27.3	24.2	26.2

¹¹ ՀՀ ՎԿ հրապարակումներ, «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018-2020 թթ.»
¹² Ներառյալ նոր այգիների բերքը

խաղող	21.8	15.6	13.1	Լոռու մարզում նկատվում է տարբեր մշակաբույսերի բերքատվության ցուցանիշների տատանումներ, սակայն դրանք հիմնականում պայմանավորված են բնակլիմայական պայմաններով: Բացառություն է թերևս միայն հատիկընդեղենի և կարտոֆիլի բերքատվության ցուցանիշի շարունակական աճը, որի պատճառը թերևս որակյալ սերմացուների կիրառումն է: Որոշակի մտահոգիչ է խաղողի բերքատվության ցուցանիշի անկումը, որը կարող է պայմանավորված լինել խաղողի համար ոչ բարենպաստ կլիմայական պայմաններով:
-------	------	------	------	--

2.2.3 Անասնաբուծության ենթա-ոլորտը

Անասնաբուծությունը համարվում է Լոռու մարզի գյուղատնտեսության կարևոր ենթա-ոլորտներից մեկը, հատկապես Տաշիրի տարածաշրջանում: Այս ենթաոլորտն իր ծավալներով կարևոր դեր ունի Հայաստանի անասնաբուծության ընդհանուր ծավալում: Անասնազվաքանակի դինամիկան վերջին ժամանակահատվածում ներակայացված է ստորև:

Աղյուսակ 5 - Կենդանիների գլխաքանակի միտումները Լոռու մարզում, գլուխ¹³

	ԽԵԿ			որից՝ կով			Խոզ			որից՝ մայր խոզ		
	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ
Լոռի	67,793	72,795	78,168	33,337	34,755	37,509	15,322	15,312	13,738	2,922	2,951	2,773
ՀՀ	571,861	579,256	613,413	253,990	251,716	265,810	197,877	223,252	200,221	39,371	42,796	37,598

	Ոչխար			որից՝ մաքի			Այծ			որից՝ մայր այծ		
	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ
Լոռի	24,948	25,313	27,372	18,157	16,813	18,060	1,536	1,656	1,880	1,341	1,307	1,424
ՀՀ	615,705	639,598	693,439	429,766	452,646	476,534	22,552	22,934	24,365	16,349	15,828	17,176

	Ձի			Թռչուն, ընդամենը			որից՝ ածան հավ		
	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ	1/1/2019թ	1/1/2020թ	1/1/2021թ
Լոռի	2,369	2,575	2,658	325,446	272,762	290,867	110,119	103,082	110,516
ՀՀ	10,748	11,367	13,092	4,152,052	4,568,083	4,203,781	2,706,018	2,868,672	2,509,446

Տավարաբուծությունը և թռչնաբուծությունը ավանդաբար ամենազարգացածն է Լոռու մարզի անասնաբուծության ենթա-ոլորտում: Դրա համար առկա են բազմաթիվ նախադրյալներ, սկսած բնական ռեսուրսների առկայությունից և կլիմայական նպաստավոր պայմաններից (հատկապես Տաշիրի տարածաշրջանում), վերջացրած ձևավորված տնտեսական ավանդույթներով և արտադրանքի մթերման ենթակառուցվածքների առկայությամբ:

¹³ ՀՀ ՎԿ հրապարակումներ, «Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները 2019-2021թթ. հունվարի 1-ի դրությամբ»

Անասնաբուծության մյուս ուղղությունները ևս առկա են Լոռու մարզում, թեև նրանց գլխաքանակների մասնաբաժինը երկրի ընդհանուր քանակների մեջ այդքան մեծ չէ, ինչպես տավարաբուծության պարագայում: Կենդանիների գլխաքանակի դինամիկայի աղյուսակներում ներկայացված չէ մեղվաընտանիքների քանակի դինամիկան՝ նման պաշտոնական տեղեկատվության բացակայության պատճառով: Այնուամենայնիվ՝ ըստ Լոռու մարզպետի 2020թ. տարեկան հաշվետվության, 2021թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 23,742 գլուխ մեղվաընտանիք՝ գերազանցելով 2020թ. հունվարի 1-ի ցուցանիշը 14.5%-ով: Սա նշանակում է, որ այս ուղղությունը լայնորեն տարածվում է Լոռու մարզում և ունի բավականին մեծ հետաքրքրություն տնտեսավարողների և բնակչության շրջանում: Կենդանիների գլխաքանակի միտումները մեծապես պայմանավորում են նաև անասնաբուծության ենթա-ուղրտի արտադրության քանակները, որոնք ներկայացված են ստորև¹⁴:

Աղյուսակ 6 - Անասնաբուծության արտադրանքի միտումները Լոռու մարզում

Մարզ	ԳՏ կենդանի և թռչուն՝ սպանդային քաշով (հազ.տոննա)			Կաթ (հազ.տոննա)			Ձուլ (մլն. հատ)		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Լոռի	20.8	20.3	20.9	84.9	82.1	83.4	51	47.9	44.3
ՀՀ	190.3	188.8	189.6	697.7	667.9	654.3	726.8	720.6	754.6

Լոռու մարզում անասնաբուծության ենթա-ուղրտի վերջին 3 տարիների արտադրության արդյունքներում նկատվում են անկման միտումներ, մասնավորապես՝ կաթի և ձվի ծավալներում: Շատ փոքր աճ 2020թ. (2018թ. համեմատ)՝ 0.1 հազ. տոննա, արձանագրվել միայն կենդանիների և թռչնի սպանդանոցային քաշով արտադրության ծավալներում:

2.2.4 Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնությունը¹⁵

Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների մասնաբաժինների հանրագումարը: Ստորև ներկայացված աղյուսակներում տրվում է տվյալ արտադրանքի ապրանքայնության մակարդակը ինչպես հանրապետության, այնպես էլ Լոռու մարզի կտրվածքով (նկարագրելով՝ թե տվյալ արտադրանքի ամբողջ արտադրության որ մասն է վաճառվել և/կամ բնամթերքով տրվել):

Աղյուսակ 7 - Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակը Լոռու մարզում, %

	Հացահատիկ և հատիկաընդեղեն			Կարտոֆիլ			Բանջարեղեն		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Հայաստան	31.4	31	30.8	47.8	47.2	47.4	81.6	82.9	84.8
Լոռի	25.2	25.6	22.8	26.9	21.8	21.2	36.4	45.5	43.1
	Պարենային բոստան			Պտուղ և հատապտուղ			Խաղող		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Հայաստան	92.4	95	94.6	70.2	64.3	63.8	90.2	90.8	91
Լոռի	3.8	2.5	0.9	39.4	32.7	29.4	0	0	21.1

¹⁴ ՀՀ ՎԿ հրապարակումներ, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2018-2020թթ. հունվար-դեկտեմբեր»
¹⁵ ՀՀ ՎԿ հրապարակումներ, «Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից», 2018-2020թթ.

	Միս			Կաթ			Ձուլ		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Հայաստան	82.3	86.4	88.7	62	60.4	59.7	40.4	38.6	37.1
Լոռի	75	75.1	69.2	64.6	58	64.7	26.7	29.2	28
	Բուրդ			Մեղր					
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.			
Հայաստան	46.7	43.7	35.4	59.3	57.3	54.3			
Լոռի	52.2	49.7	33.5	49.4	33.3	37.6			

Որոշակի ուղղակի կապ կա ապրանքի արժեքի և ապրանքայնության մեջ. որքան արժեքը բարձր է, այնքան բարձր է ապրանքայնությունը: Նման կորելացիան ընկալելի է, քանի որ բարձրարժեք ապրանքների իրացումը գյուղացիական տնտեսություններին թույլ է տալիս ֆինանսական միջոցներ գնեցնել այլ պահանջարկների առավելագույնս բավարարման համար: Միաժամանակ, ապրանքայնության բարձր մակարդակ ունեն այն ապրանքները, որոնք շուկայում առաջարկում են արդյունաբերական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները, որոնք իրականացնում են լուրջ ներդրումներ, կիրառում են գյուղատնտեսական տեխնոլոգիաներ և մեխանիզացիա, ունեն կենդանիների համեմատաբար մեծ գլխաքանակ, արտադրում են մեծ քանակությամբ արտադրանք:

Լոռու մարզում ապրանքայնության համեմատաբար բարձր մակարդակ ունեն կաթը, բանջարեղենը, մեղրը, բուրդը և հատկապես՝ միսը: Ապրանքայնության վերջին տարիների միտումները վկայում են սակայն, որ գրեթե բոլոր ուղղություններով նկատվում է դրանց նվազում, բացառությամբ խաղողի, ձվի և կաթի:

2.2.5 SWOT վերլուծություն

Սույն փաստաթղթի համատեքստում SWOT վերլուծությունը կիրառվել է որպես ռազմավարական պլանավորման գործիք, որը թույլ է տալիս գնահատել արտաքին և ներքին միջավայրի գործոնների ազդեցությունը տարածքային վարչական միավորի՝ մարզի զարգացման կոնկրետ ոլորտի՝ գյուղատնտեսության վրա: Վերլուծության համատեքստում գնահատվում է գործոնների հետևյալ հիմնական կատեգորիաները.

- S = Strengths - ուժեղ կողմեր:** Մարզի ներքին այնպիսի բնութագրիչներ, որոնք ապահովում են առավելություններ կամ առավել շահավետ պայմաններ համեմատած այլ տարածքների/մարզերի հետ, այլ կերպ ասած այն ոլորտները, որտեղ մարզի գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչներն իրենց ավելի ուժեղ և կայուն են զգում:
- W = Weaknesses - թույլ կողմերը կամ թերությունները:** Մարզի այնպիսի ներքին բնութագրիչներ, որոնք արգելակում են աճը (ներառյալ և հատկապես գյուղատնտեսության ոլորտում), խանգարում են առաջատար լինել շուկայում, համարվում են անմրցունակ:
- = Opportunities - մարզի (գյուղատնտեսական զարգացման) հնարավորությունները:** Արտաքին միջավայրի գործոններ, որոնք կարող են ապագայում բարենպաստ ազդեցություն ունենալ մարզի զարգացման վրա:
- T = Threats - մարզի (գյուղատնտեսական զարգացման) սպառնալիքները:** Արտաքին միջավայրի գործոններ, որոնք կարող են ապագայում թուլացնել մարզի դիրքն ու մրցունակությունը շուկայում և հանգեցնել գյուղատնտեսական արտադրության ծավալների նվազման և շուկայի մասնաբաժնի կորստի:

SWOT վերլուծության գործիքի կիրառությունը հատկապես արժևորվում է, եթե այն կիրառվում է մասնակցային մոտեցմամբ, բազմաթիվ շահագրգիռ կառույցների և արհեստավարժ մասնագետների համատեղ մտազրոհի պայմաններում: Ճշգրիտ այդ մոտեցումն է որդեգրվել նաև սույն ռազմավարական փաստաթղթի պատրաստման ժամանակ: Իրականացված SWOT վերլուծության արդյունքներն ամփոփված են ստորև:

Աղյուսակ 8 - Լոռու մարզում գյուղատնտեսության զարգացման SWOT վերլուծություն

	ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՐ	ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒՄ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՐ
	Ուժեղ կողմեր	Թուֆլ կողմեր
Ներքին բնութիւնի գործոններ	Բերրի և բերքատու հողերի առկայություն	Հին և մաշված գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ, ժամանակակից մեքենաների բացակայություն (հիմնականում)
	Բարձրորակ խոտհարքներ և արոտավայրեր՝ անասնաբուծության համար	Որակավորում ունեցող մասնագետների պակաս / բացակայություն, գյուղատնտեսական կրթության ցածր մակարդակ
	Բարենպաստ եղանակային պայմաններ, բազմաշերտ կլիմայական գոտիների առկայություն	Գյուղատնտեսական արտադրանքի շուկայավարման անբավարար գիտելիք և փորձ
	Կաթի մեծածավալ մթերման հնարավորություններ, կաթնամթերքի արտադրության մեծ փորձ և գիտելիք	Գործողությունների ցածր արդյունավետություն և կոնսուլիդացման անբավարար ջանքեր
	Կաթ վերամշակման (պանրի և կաթնամթերքի արտադրության) հարուստ ավանդույթ	Արոտների կառավարման պատշաճ համակարգի բացակայություն
	Կայուն/Կանաչ գործելակերպերի առկայություն (վերականգնվող էներգիայի կիրառման փորձ, նորարարությունների և ինտենսիվ այգիների առկայություն և այլն)	Եկթակառուցվածքների (օր. մսի, մեղրի ընդունման կետեր կամ վերամշակման ձեռնարկություններ, լաբորատոր կարողություններ և այլն) անբավարարություն / բացակայություն
	Ամմշակ սակայն բերրի հողերի առկայություն	Հողերի մասնատվածություն
	Ոռոգման ջրի առկայություն	Ֆերմերների գիտելիքի և անհրաժեշտ տեղեկատվության ցածր մակարդակ: Ֆերմերային տնտեսություններում ճիշտ պլանավորման բացակայություն
		Սորտափոխության համար սերմերի ոչ բավարար քանակի ներմուծում, սելեկցիոն կայանների բացակայություն
		Ժամանակակից և նորարարական գյուղատնտեսության կիրառման ցածր մակարդակ, հակակարկտային համակարգերի անբավարար քանակություն
	Ջրային ռեսուրսների կառավարման ցածր արդյունավետություն (ոռոգման ջրի մեծ կորուստների առկայություն, փոքր ջրավազանների բացակայություն)	
	Հանրապոռոթագործոններ	Մրտուսուիբեր
Կրտաքին բնույթի գործոններ	Գյուղատնտեսության ոլորտին օժանդակող պետական ծրագրեր	Բնական աղետներ՝ ցրտահարություն, կարկուտ, երաշտ, ջրհեղեղ, սելավ և այլն: Բացասաբար փոփոխվող բնակլիմայական պայմաններ:
	Գյուղատնտեսության ոլորտին օժանդակող միջազգային ծրագրեր՝ ներդրումներ, տեխնիկական աջակցություն, իրազեկում և վերապատրաստում և այլն:	Սուր մրցակցություն մարզի և մյուս մարզերի ֆերմերների, ինչպես նաև ներմուծողների հետ: Մրցակիցների անբարեխղճ պահվածք, զնային դեմպինգի կիրառություն:
	Տուրիստների աճող հոսք, ագրո և գաստրո տուրիզմի զարգացման նախադրյալներ	Արտաքին և ներքին քաղաքական և տնտեսական վիճակի անկայունություն, հիվանդություններ և սահմանների փակ լինել:
	Շուկայում անասնաբուծության արտադրանքի (հատկապես, մսի, կաթի և կաթնամթերքի) բարձր պահանջարկ	Հողի բերրի շերտի վիճակի վատթարացում, հողերի Էռոգիա, դեգրադացում և անապատացում:
	(Ինտենսիվ) Պտղատու այգիների հիմնման հնարավորություններ կլիմայի ընթացիկ	Աշխատանքային և հիմնական միզրացիա:

	փոփոխության պայմաններում	
	Ոչ ավանդական, բարձրաժեք մշակաբույսերի աճեցման և արտահանման հնարավորություն	Երկրում ոռոգման համակարգի սխալ կառավարում:
	Նորարարական մոտեցումներ (սերմեր, ագրո-տեխնոլոգիաներ, ոռոգում, վնասատուների դեմ պայքար) բուսաբուծության և անասնաբուծության (կենդանիների տոհմային հատկանիշների բարելավում) ենթա-ոլորտներում:	Գյուղատնտեսական արտադրանքի գների էական տատանումներ ներքին և արտաքին շուկաներում
	Ոչխարաբուծության և այծաբուծության (միայն կոնկրետ տեսակների) զարգացման պոտենցիալ (արոտավայրերի առկայություն, արտահանման հնարավորություններ)	Մշակաբույսերին և գյուղ կենդանիներին սպառնացող հիվանդություններ
	Կայուն և կանաչ ագրո-տեխնոլոգիաների կիրառություն: Կանաչ գյուղատնտեսության արտադրանքի աճող պահանջարկ	

2.2.6 Գյուղատնտեսության օրենսդրական համակարգումը և կառավարման քաղաքականությունը

2.2.6.1 Կառավարման օրենսդրական համակարգը

ՀՀ մարզերում գյուղատնտեսության վարչական և կառավարման համակարգը կարելի է բաժանել հետևյալ բաղադրիչների.

1. Գյուղատնտեսության ոլորտի համապետական օրենսդրական և ենթաօրենսդրական համակարգ,
2. Մարզային մակարդակում գյուղատնտեսության ոլորտի կառավարման ենթաօրենսդրական համակարգ:

Համապետական մակարդակում գյուղատնտեսության ոլորտի կառավարման **հիմնական օրենսդրական ակտերի** թվում կարելի առանձնացնել հետևյալները :

Աղյուսակ 9 - ՀՀ գյուղատնտեսական ոլորտը համակարգող օրենսդրական ակտերը

Օրենսդրական ակտ	Հակիրճ նկարագիր ¹⁶
ՀՀ Հողային օրենսգիրք	Սահմանում է ՀՀ հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: ՀՀ-ում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման:
ՀՀ Ջրային օրենսգիրք	Սահմանում է ՀՀ ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները, պատասխանատու մարմիններին, ազգային քաղաքականության և ծրագրի իրականացման համակարգը, վերահսկողությունն ու մոնիտորինգը, օպերացիոն կառավարման սկզբունքները:
ՀՀ Հարկային օրենսգիրք	Կարգավորում է ՀՀ-ում կիրառվող հարկերի և նախատեսված վճարների հետ կապված հարաբերությունները, սահմանում է ՀՀ հարկային համակարգի սկզբունքները, հարկի և վճարի հասկացությունները, տեսակները, հարկ

¹⁶ Զաղվածք Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգից

	վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև հարկային արտոնությունները: Սահմանում է հիմնական հարկատեսակների գերակշիռ մեծամասնության վճարումից առաջնային գյուղատնտեսության ազատված լինելու արտոնությունը:
ՀՀ օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին	➤ Կարգավորում է Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ոլորտի հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է այդ ոլորտի կարգավորման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:
ՀՀ օրենքը օրգանական ՊՏ մասին	➤ Կարգավորում է օրգանական գյուղատնտեսական մթերքի և հումքի արտադրության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրի բույսերի մթերման հետ կապված հարաբերությունները, սահմանում է օրգանական գյուղատնտեսության վարման իրավական հիմքերը, սկզբունքները, արտադրանքի շրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները, պետական աջակցության ուղղությունները և լիազոր մարմնի պարտավորությունները:
ՀՀ օրենքը ՊՏ կոոպերատիվների մասին	➤ Կարգավորում է գյուղատնտեսական կոոպերատիվների և դրանց միությունների ստեղծման, անդամակցության, գործունեության իրականացման, կառավարման, գործունեության դադարման, վերակազմակերպման, լուծարման հետ կապված հարաբերությունները և սահմանում է դրանց մասնակիցների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերատիվների պետական աջակցության ուղղությունները:
ՀՀ օրենքը սննդամթերքի անվտանգության մասին	➤ Կարգավորում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող կյուլթերի, սննդի շղթայի և առևտրի ու հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգությանն առնչվող հարաբերությունները, ինչպես նաև ամրագրում է պետության կողմից նախատեսվող մարդու առողջության պաշտպանության երաշխիքները սննդամթերքի և սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող կյուլթերի վնասակար ու վտանգավոր ազդեցությունից:
ՀՀ օրենքը տոհմային անասնաբուծության մասին	➤ Կարգավորում է անասնաբուծության ինտենսիվացման, տոհմանյութի ստացման, գյուղատնտեսական կենդանիների նոր ցեղերի ստեղծման, վերարտադրության, օգտագործման, անհետացման վտանգի տակ գտնվող ցեղերի պահպանման հետ կապված հարաբերությունները:
ՀՀ օրենքը սելեկցիոն նվաճումների պահպանության մասին	➤ Կարգավորում է կենդանիների ցեղերի սելեկցիոն նվաճումների ստեղծման, իրավական պահպանության ու օգտագործման հետ կապված գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները:
ՀՀ օրենքը անասնաբուծության մասին	➤ Կարգավորում է ՀՀ-ում անասնաբուծության ոլորտի իրականացմանը, կառավարմանն առնչվող հարաբերությունները:
ՀՀ օրենքը կերի մասին	➤ Կարգավորում է կերի և կերային հավելումների ներմուծման և արտահանման, արտադրության (ներառյալ՝ առաջնային), արտադրության անվտանգության ապահովման, պահման, պահեստավորման, փոխադրման, օգտագործման, իրացման, մակնշման, փաթեթավորման և գովազդի հետ կապված հարաբերությունները:
ՀՀ օրենքը բուսա - սանիտարիայի մասին	➤ Կարգավորում է ՀՀ-ում բուսասանիտարիայի ոլորտի իրականացմանը, կառավարմանն առնչվող հարաբերությունները, ամրագրում է պարտադիր բուսասանիտարական պահանջները և բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների աճեցման, պահպանման, փոխադրման կամ շուկայահանման գործընթացում բուսասանիտարական հիմնական սկզբունքները, ինչպես նաև հողերի մշակությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունները:

<p>ՀՀ օրենքը մեղվաբուծության մասին</p>	<p>➤ Կարգավորում է մեղվաբուծության բնագավառի կառավարման, մեղվաբուծական մթերքների արտադրության հետ կապված հարաբերությունները, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում մեղրատու մեղուների բուծման, խնամքի, գյուղատնտեսական Էնտոմոֆիլ բույսերի փոշոտման համար այդ մեղուների օգտագործման, մեղվաբուծական մթերքների ստացման, մեղրատու մեղուների պահպանման և անասնաբուժական սպասարկման ապահովմանն ուղղված գործունեության իրավական հիմքերը:</p>
<p>ՀՀ օրենքը սերմերի մասին</p>	<p>➤ Կարգավորում է բույսերի օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի գրանցման, սերմերի արտադրության, վերարտադրության, հավաստագրման, փոխադրումների, պահպանության, իրացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:</p>
<p>ՀՀ օրենքը ԳՏ հողերի մելիորացիայի մասին</p>	<p>➤ Կարգավորվում են հողերի բերրիության պահպանության և բարձրացման, հողատարումից և աղակալումից պաշտպանման, գյուղատնտեսական շրջանառության մեջ սակավ բերրի հողերի ընդգրկման նպատակով գյուղատնտեսական հողերի մելիորացիայի հետ կապված հարաբերությունները:</p>

ՀՀ գյուղատնտեսության ոլորտը համակարգող ոչ բոլոր օրենսդրական ակտերն են ներառված վերը ներկայացված աղյուսակում, սակայն հիմնական և փաստացի գործող/կիրարկվող օրենքները հիշատակված են: Ի դեպ, ընդունված օրենքների և այլ իրավական ակտերի փաստացի կիրակումը ոլորտի հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում: Ներկայացված օրենքները պարտադիր են ՀՀ ողջ տարածքի, բոլոր մարզերի համար, ներառյալ՝ սույն փաստաթղթի տարածքային սուբյեկտը հանդիսացող Լոռու մարզը: **Գյուղատնտեսության ոլորտը համակարգող և կառավարող օրենսդրության մեջ Լոռու մարզի համար որևէ բացառություն կամ տարբերակում նախատեսված չէ:**

2.2.6.2 Գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունը

ՀՀ Լոռու մարզում ագրարային քաղաքականությունն իրականացվում է ՀՀ համապատասխան օրենսդրական համակարգի շրջանակներում և դրա պահանջներին համապատասխան: Զաղաքականության իրականացման մակարդակում Լոռու մարզի վարչական կառավարման մարմինը՝ մարզպետարանը, առաջնորդվում է ենթաօրենսդրական իրավական ակտերի պահանջներով, որոնց թվում նպատակահարմար է առանձնացնել հետևյալ կարևոր փաստաթղթերը.

1. «ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր», Հավելված N1, ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման: Ծրագիրը սահմանում է, որ «նշված ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը միտված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արտադրողականության բարձրացմանը, հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը, ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործմանը, պարենային ապահովման մակարդակի բարձրացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրանքի իրացման և արտահանման խթանմանը, եկամուտների ավելացմանը»: Այս հիմնարար սկզբունքների ներքո ռազմավարությունը սահմանում է հստակ և չափելի նպատակներ և դրանց մի մասին սերտաճած գործողություններ: Պետք է սակայն նշել, որ գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության և նպատակների սահմանման համատեքստում աշխարհագրական որևէ ուղղորդում (օրինակ՝ որևէ մարզի մասով), կամ առանձնացված անդրադարձ չկա:
2. «ՀՀ Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարություն», Հավելված N1, ՀՀ կառավարության

2019թ. դեկտեմբերի 19-ի N1886-L որոշման: Այս ռազմավարությունը տալիս է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ընթացիկ վիճակը, սահմանում է ՀՀ գյուղատնտեսության զարգացման տեսլականը 2020-2030թթ. ժամանակահատվածի համար՝ «ունենալ կայուն զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսություն»: Ռազմավարությունը շարունակվում է, սահմանելով գյուղատնտեսության զարգացման առաջնահերթությունները, առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները: Փաստաթղթի այս բաժինը հատկապես կարևորվում է, քանի որ հիշյալ առաջնահերթությունների գերակշիռ մեծամասնությունը (ընդհանուր առմամբ՝ 14 գործոն / առաջնահերթություն) ինտենսիվորեն կիրառվել է Լոռու մարզում գյուղատնտեսության ռազմավարական զարգացման ներուժային ենթա-ոլորտների ընտրության հիմնավորման համատեքստում: Ռազմավարությունն առանձին անդրադարձել է իրականացման ռիսկերի գնահատմանն ու կառավարմանը, ինչպես նաև սահմանել է հաշվետվողականության, մոնիտորինգի և գնահատման սկզբունքները: Պետք է սակայն նշել, որ գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական զարգացման համատեքստում աշխարհագրական որևէ ուղղորդում (օրինակ՝ որևէ մարզի մասով), կամ առանձնացված անդրադարձ չկա:

3. «ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն», Հավելված, ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 29-ի N29 արձանագրային որոշման: Ռազմավարությունը սահմանում է, որ «ՀՀ տարածքային զարգացման ժամանակակից քաղաքականությունն ուղղված է մրցունակության և կառուցողականության բարձրացմանը՝ տարածքային կառավարման մոտեցումների իրականացմամբ և մարդկային կապիտալի, նորարարության, ներառման ու ենթակառուցվածքի ինտեգրմամբ»: Փաստաթղթում անդրադարձ է արված երկրում տարբեր ոլորտների ընթացիկ իրավիճակին և զարգացման միտումներին, սահմանված են տարածքային զարգացման ռազմավարական հայեցակարգ, նպատակներ և սկզբունքներ, ինչպես նաև ֆինանսավորման մեխանիզմներ և կոնկրետ գործողությունների պլան: Պետք է նշել, որ փաստաթուղթը խորը և ամբողջական անդրադարձ չի կատարում գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական հարցերին, սակայն ոլորտը սահմանում է որպես ռազմավարական զարգացման ուղղություն, շեշտը դնելով գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման հնարավորությունների խթանման վրա:
4. «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություն», Հավելված N5, ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի նիստի N29 արձանագրային որոշման: «Ռազմավարությունը սահմանում է մարզի երկարաժամկետ զարգացման հեռանկարները և ուղղությունները՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Այն բխում է ազգային ռազմավարական ծրագրի պահանջներից և մասնակցային եղանակով ներգրավվում է բոլոր շահագրգիռ կողմերին: Լոռու մարզի տեսլականն է՝ ունենալ բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն և զարգացած զբոսաշրջություն, ՏՏ ոլորտ»: Ռազմավարական այս փաստաթուղթը մակերեսային և սահմանափակ անդրադարձ է կատարում մարզում գյուղատնտեսության զարգացման ռազմավարական խնդիրներին և առաջնահերթություններին: Այնուամենայնիվ գյուղատնտեսության, մասնավորապես ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը ընդունվել է որպես մարզի երեք առաջնահերթ գերակայություններից մեկը:

Առկա տեղեկատվության և փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ներկա պահին Լոռու մարզը գյուղատնտեսության զարգացման գործող ռազմավարական ծրագիր փաստացի չունի, եթե հաշվի չառնենք վերոնշյալ ռազմավարությունները: Սույն Ռազմավարական Ծրագիրը հավակնում է դառնալ հենց այն

փաստաթուղթը, որը կլրացնի մինչև 2025թ. մարզի զարգացման ռազմավարության նշված բացը:

Գյուղատնտեսական քաղաքականության իրականացման բաժինը ավարտում ենք մարզի աշխատանքային խմբերի կողմից բարձրացված կարևոր մի խնդրի ներկայացմամբ: Ըստ ՀՀ գործող օրենսդրության և կառավարման համակարգի, մարզային իշխանություններին վերապահված են ոլորտային կառավարման և վերահսկողության խիստ սահմանափակ գործառնություններ, որոնք տեսանելի ապագայում կարող են նվազել համայնքների խոշորացման գործողությունների իրականացմանը և տարածքային կառավարման օրենսդրության վերանայմանը զուգահեռ: Այս հանգամանքը խիստ դժվարացնելու է մարզերում մարզպետարանների կողմից առանձին ոլորտների կառավարման, ներառյալ սույն ռազմավարական ծրագրի իրականացման և ընթացքի վերահսկման, նախանշված արդյունքների ապահովման գործողությունների իրականացումը: Սույն խնդիրը հրատապ է և ենթակա է անհապաղ քննարկման համապատասխան պետական գերատեչություններում:

2.2.7 Գյուղատնտեսական զարգացման ծրագրերը

ՀՀ կառավարությունը գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն օժանդակող ծրագրեր է իրականացնում արդեն մոտ երեք տասնամյակ: Այս նպատակով կիրառվում են տարատեսակ գործիքներ՝ ուղղակի ֆինանսավորվող ծրագրեր, սուբսիդիաներ, սուբվենբցիոն ծրագրեր, միջազգային գործընկերների կողմից ֆինանսապես օժանդակվող ծրագրեր և այլն: Իրականացվող բազմաթիվ ծրագրերի շարքում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնականները, որոնք իրականացվում են ՀՀ ողջ տարածքում, ներառյալ՝ Լոռու մարզում¹⁷.

1. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» նպատակն է երկրի ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտեսվարողների կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը:
2. «ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ. զարգացման» Ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է, ինչը հնարավորություն կընձեռի անհայտ ծագումնաբանությամբ, վերարտադրության համար ոչ պիտանի, ցածր մթերատու կենդանիների փոխարեն նախիրները համալրել արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված տոհմային ԽԵԿ-ով, զարգացնել տոհմային գործը, միջցեղային տրամախաչումների միջոցով բարելավել տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնել կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնել արտադրվող կաթի և մսի ինքնարժեքը՝ ներկրվող համանման արտադրանքի նկատմամբ այն դարձնելով առավել մրցունակ:
3. «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի հիմնական նպատակն է բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները: Ծրագրի շրջանակում պետությունը կփոխհատուցի «խելացի» անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում իրականացրած շահառուների ծախսերը:
4. «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագրի իրականացման նպատակը գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումն է, որի շրջանակում կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգերի ներդրման համար պետական աջակցություն է

¹⁷ Աղբյուրը՝ <https://mineconomy.am/page/1338>

ցուցաբերվում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման կամ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով՝ ըստ տնտեսավարողի հայեցողության:

5. «ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի հիմնական նպատակը գյուղատնտեսության ոլորտի կորուստների ռիսկերը մեղմելու նպատակով պետական աջակցության միջոցով գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրման խթանումն է, որը կհանգեցնի պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությանը, տնտեսավարողների եկամուտների աճի ու այգեգործության արդյունավետության բարձրացման:
6. «ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագրի նպատակն է այգետնկույզների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության և խաղողագործության զարգացումը, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, պտուղների և հատապտուղների ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը:
7. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի հիմնական նպատակը հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք մթերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն է:
8. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է: Ծրագրի շրջանակներում տնտեսավարողներին տրամադրվում է հետևյալ գյուղատնտեսական տեխնիկան. տարբեր մակնիշների տրակտորներ, կոմբայններ, հավաքիչ-մամիչներ, տրակտորային շարքացաններ, տրակտորային գութաններ, տրակտորային խոտհնձիչներ, կարտոֆիլատնկիչներ, կարտոֆիլաքանդիչներ, կուլտիվատորներ, ֆրեզներ, սրսկիչներ, այլ գյուղատնտեսական տեխնիկա:
9. «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրի հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է, որը նախադրյալներ կստեղծի գյուղատնտեսական ծագման մթերքների և դրանց վերամշակված արտադրանքի արտադրության ծավալների ավելացման, միջազգային չափորոշիչներին համապատասխան որակական և անվտանգության պահանջների ապահովման, մրցունակության բարձրացման, արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև ներկրվող արտադրանքը տեղական արտադրությամբ փոխարինելու համար:
10. ՀՀ Կառավարության 2019թ. սեպտեմբերի 19-ի 1305-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության» ծրագիրը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցությունն իրականացնել 2 եղանակով. ա) տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում և բ) Կատարված ծախսի փոխհատուցում:

11. «Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագրի նպատակն է փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրանքի արտադրության ծավալները, բարձրացնել արտադրված արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը: Առաջարկվում է ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման 3 մոդել:
12. «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձական ծրագրի» իրականացման հիմնական նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումը:
13. Երկրում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2021թ. պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է կորոնավիրուսի տնտեսական և ռազմական դրության, ինչպես նաև սակավաշրջության հետևանքների մեղմման, պարենային անվտանգության ապահովման համար աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով նպաստել ագրոտնտեսական բարձր ցուցանիշներով օժտված սերմերի հասանելիության ապահովմանը, բերքատվության բարձրացմանը, ցանքատարածությունների ավելացմանը՝ նաև չմշակվող հողերի օգտագործման միջոցով, արդյունքում տեղական աշնանացան ցորենի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը:
14. Երկրում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով ռազմական և արտակարգ դրության հետևանքների՝ մասնավորապես օգտագործվող արոտավայրերի կրճատման արդյունքում անասնակերի ապահովման խնդիրների մեղմումն ու պարենամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը:
15. Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիր:
16. Ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2022-2023թթ. ծրագիր, որը 2022 թվականի հունվարի 1-ից կփոխարինի «ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման» ծրագրին: Ծրագրով նախատեսվում է խթանել խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնումը, ոռոգման արդիական համակարգերի և ջրավազանների կառուցումը, կարկտապաշտպան ցանցերի ներդրումը:

Պետական օժանդակության ներկայացված բոլոր ծրագրերը հասանելի են Լոռու մարզի գյուղացիական տնտեսությունների համար, առանց խտրականության, սակայն կոնկրետ պայմանների համապատասխանության պահանջով: Բացառապես Լոռու մարզի համար նախագծված և իրականացվող ծրագրեր չկան, դրանք հասանելի են ՀՀ բոլոր մարզերում:

Պետական օժանդակության այս ծրագրերից զատ, Լոռու մարզի տարածքում տարբեր միջազգային կառույցների ֆինանսավորմամբ իրականացվում են նաև գյուղատնտեսության տարբեր ենթա-ոլորտների զարգացման ծրագրեր: Դոնոր կազմակերպությունների թվում պետք է հիշատակել ՀԲ-ն, ԵՄ-ն, ՄԱԿ-ի կառույցները, ԱՄՆ ՄՉԳ-ն, ԱԶԲ-ն, Ավստրալի և Շվեյցարիայի Չարգացման գործակալությունները, Պարենի և Գյուղատնտեսության Կազմակերպությունը, Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամը և այլն:

2.3 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՄՍԱՆՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԶԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

2.3.1 Ներածական

Լոռու մարզի տարածքի ռելիեֆն ընդհանուր առմամբ խիստ մասնատված է: Մարզի տարածքով լայնակի ու երկայնակի փոփոխ լեռներն ու լեռնաբազուկներն այն բաժանել են ինքնուրույն բնական պայմաններ ունեցող շրջանների: Մարզի ռելիեֆի և բնական այլ պայմանների վրա մեծ ազդեցություն ունի Դեբեդ գետն իր վտակներով:

Կլիման չափավոր խոնավ է, ենթակա՝ վերընթաց գոտիական օրիանաչափության, միաժամանակ՝ առանձին տարածքներում ընդգծված կլիմայական տարբերություններով: Ըստ բարձրության հերթափոխվում են մերձարևադարձային չափավոր խոնավ բարեխառն և ցուրտ կլիմայական տիպերը: Ոռոգման պայմաններով առանձնանում են՝ Թումանյանի ցածրադիր գետահովտային և ոչ մեծ հարթությունների շրջանը, Սպիտակի շրջանը, որի պայմաններն ավելի շատ նման են Շիրակին և Լոռու սարահարթին:

Թումանյանի տարածաշրջանի ցածրադիր վայրերում կլիման մեղմ է: Հունվարյան միջին ջերմաստիճանը -2°C -ից -1°C է, հուլիսինը՝ $20 - 23^{\circ}\text{C}$: Անսառնամանիք օրերի թիվը 210-220 է, 10°C -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ $3,500-3,600^{\circ}\text{C}$: Խիստ չորային ժամանակաշրջանն ընկած է հուլիսի 10-ից հոկտեմբերի 15-ի միջև: Մթնոլորտային տեղումների քանակությունը 500 – 550 մմ, խոնավացման գործակիցը՝ 0.55 – 0.65:

Սպիտակի տարածաշրջանում առանձնանում են ոռոգման երկու խոշոր ենթատարածքներ՝ Շիրակամուտ–Մեծ Պարնի, որտեղ ընդարձակ հարթ գոգավորությունում համատարժ մշակելի հողեր են և Ջրաշեն– Սպիտակի՝ թեքությամբ ուղղված դեպի Վանաձոր քաղաքը: Այստեղ կլիման ավելի խիստ է, ամառը չորային, ձմեռը՝ սառնամանիքային: Չոր ժամանակաշրջանը սկսվում է հուլիսի առաջին տասնօրյակին և վերջանում հոկտեմբերի սկզբներին: Մթնոլորտային տեղումների քանակը ցածրադիր՝ 1500 – 1600 մմ սիշերում հասնում է 450-500 մմ-ի, հուլիս-օգոստոսյան ջերմաստիճանը $19 - 20^{\circ}\text{C}$ է: Խոնավացման գործակիցը հավասար է 0.56 – 0.67: Ավելի բարձր՝ մինչև 1,700 մմ սիշերում մթնոլորտային տեղումների տարեկան քանակությունը մոտենում է գոլորշունակությանը:

Հարկ է նշել, որ Սպիտակում շատ են արևոտ օրերը:

Լոռու սարահարթում՝ Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջաններում ոռոգելի հողերը բաշխված են 1,300-1450 մ բարձրություններում, որտեղ մթնոլորտային տեղումների քանակը, հատկապես Տաշիրի տարածաշրջանում, հավասարվում է գոլորշունակությանը, այսինքն՝ խոնավացման գործակիցը մոտենում է մեկի: Ամռանը շոգ չէ, հուլիս-օգոստոս ամիսներին ջերմաստիճանը Ստեփանավանում $16.5 - 17.0^{\circ}\text{C}$ է, Տաշիրում՝ $15.5 - 16.0^{\circ}\text{C}$:

2.3.2 Մթնոլորտային օդի պահպանության խնդիրները

Լոռու մարզում մթնոլորտային արտանետումների քանակը բարձր է մետալուրգիայի և հանքարդյունաբերության հաշվին: Մարզի օդային ավազանը աղտոտող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններն են՝ «Ալավերդու պղնձածուլական գործարանը», «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը», «Թեղուտը»: Կան նաև այլ խոշոր ու միջին արդյունաբերական ձեռնարկություններ:

Վանաձոր քաղաքի 3 մշտական և 24 պասիվ նմուշառիչներով, Ալավերդի քաղաքի 2 մշտական, 18 պասիվ նմուշառիչներով, ինչպես նաև ավտոմատ դիտակայաններում նմուշառման եղանակով կատարվում են օդային ավազանի դիտարկումներ, որոնցում որոշվում են ծծմբի ու ազոտի օքսիդների, փոշու և այլ զագերի պարունակությունները:

Ավտոտրանսպորտի շուրջ 70%-ը ներկայումս բենզինի փոխարեն աշխատում է բնական գազով, որն անհամեմատ ավելի քիչ է աղտոտում մթնոլորտը: Լոռու մարզում 1 բնակչի հաշվով մթնոլորտային տեսակարար արտանետումները հասնում են 200 – 220 կգ սահմաններին, որը ամենաբաժր ցուցանիշներից է ՀՀ-ում:

Մթնոլորտի աղտոտման առումով ազդեցիկ խնդիրներ են հանդիսանում մաքրման և ֆիլտրացիոն կայանների բացակայությունը, արդյունաբերական ձեռնարկություններում մթնոլորտային արտանետումների ոչ լիարժեք կորզումը: Դրա հետևանքը դրսևորվում է բնակչության ավերգիկ և մասնագիտացված բնույթի հիվանդությունների թվի աճով, շնչառական համակարգի խնդիրների առկայությամբ, ինչը արտահայտված երևույթ է Ալավերդի քաղաքում և մոտակա բնակավայրերում:

Անօրգանական փոշու և թունավոր գազերի որսման և չեզոքացման սարքավորումների շարքից դուրս գալու ներկա պայմաններում խիստ պահանջված է դառնում օդում սահմանային թուլատրելի արտանետումների սահմանի վերահսկումը:

Մթնոլորտային օդն աղտոտումից զերծ պահելու, ինչպես նաև բնական ծագման վառելիքային պաշարների պահպանության համար անհրաժեշտ է հնարավորինս արագ և սահուն կերպով անցում կատարել դեպի վերականգնվող (արևային, քամու, հիդրո, երկրաջերմային) էներգիայի օգտագործմանը:

2.3.3 Ջրային պաշարների պահպանման խնդիրները

Լոռու մարզն առանձնանում է ջրագրական խիտ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի առանձնահատկություններով, առատ մթնոլորտային տեղումներով:

Ջրի քիմիական, մանրէաբանական անալիզների հետազոտությունների տվյալները վկայում են, որ մարզի խմելու ջրի աղբյուրները ունեն բարձր որակական հատկանիշներ:

Մարզի գետային ցանցը գրեթե ամբողջությամբ պատկանում է Դեբեդ գետի ավազանին, իսկ հարավ-արևելքում այն ներգրավում է նաև Աղստև գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի մի մասը: Մարզի տարածքով հոսում են 1,356 գետեր և գետակներ, որոնց ընդհանուր երկարությունը 3,505 կմ է, նրանցից միայն 55-ը (4.1%), ունեն 10 և ավելի կմ երկարություն: Գետերի ջրերը հիմնականում օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով: Սակայն գետերի մեծ մասի հոսքը կարգավորված չէ, համարյա չկան արհեստական ջրամբարներ և մարզի ջրային ռեսուրսների մեծ մասը, քիչ օգուտ տալով, արտահոսում են հանրապետության տարածքից: Գետային հոսքի կարգավորումը և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը Լոռու մարզի, ինչպես և ողջ հանրապետության առաջնահերթ հիմնախնդիրներից է:

Դեբեդի հիմնական աղտոտողներից են համարվում վերը հիշատակված մարզի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, մասնավորապես «Ալավերդու պղնձածուլական գործարանը» (որը ընդհատումներով և դադարներով է աշխատում, իսկ ռազմավարության մշակման պահին գտնվում է կարգավիճակի փոփոխման գործընթացում), «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը» և այլ խոշոր ու միջին արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ Վանաձորի քիմիական համալիրը ներկայումս գրեթե չի գործում (իսկ ռազմավարության մշակման պահին գտնվում է կարգավիճակի փոփոխման գործընթացում) և դեպի ջրային ավազան գործնականում արտանետումներ չունի: «Ալավերդու պղնձածուլական կոմբինատը» աշխատում է ներքին ջրաշրջանառության սկզբունքով՝ նպատակ հետապնդելով

կրճատել ջրի կորուստները և նվազեցնել ծանր մետաղների արտահոսքը դեպի ջրային էկոհամակարգ:

Մարզում այս ոլորտին առնչվող հիմնախնդիրներից են՝ ջրային պաշարների ոչ արդյունավետ կառավարումը և մաքրման կայանների բացակայությունը: Բացի այդ, լուրջ խնդիր է գործող մեծաթիվ ՋԷԿ-ների բացասական բնապահպանական ազդեցությունը շրջակա միջավայրում: Հենց այս խնդիրների լուծումներն էլ հանդիսանում են Լոռու մարզի ջրային պաշարներին առնչվող առաջնահերթությունները:

2.3.4 Հողերի պահպանության հիմնախնդիրները

Լոռու մարզի հողածածկը բազմազան է. Թումանյանի և Գուգարքի տարածաշրջաններում գերակշռում են լեռնաանտառային դարչնագույն հողերը, Սպիտակի տարածաշրջանում և Լոռու սարահարթում լեռնային սևահողերի կարբոնատացված և սևահողային տիպիկ ենթատիպերը:

Մարզում գյուղատնտեսության մեջ հողօգտագործման ներկա վիճակն այդ ոլորտի զարգացման առումով կարելի համարել խիստ անբավարար, ինչի մասին վկայում է երկրագործական նշանակությամբ օգտագործվող մակերեսների դինամիկան: 2016-2020թթ. մշակաբույսերին հատկացված ցանքատարածությունները կազմել են համապատասխանաբար՝ 33,181 հա, 27,111 հա 23,662 հա, 21,881 հա, 21,621 հա, այսինքն՝ այդ ժամանակամիջոցում փաստացի մշակվող մակերեսներն անընդմեջ նվազել են՝ ելակետային համեմատ մինչև 34,8 %-ով: Այդ տարիներից յուրաքանչյուրում չօգտագործված վարելահողերի մակերեսները, որտեղից խոտի բերք է հավաքվել՝ եղել է համապատասխանաբար՝ 7,043 հա, 9,547 հա, 9,459 հա, 9,741 հա, 9,176 հա, որոնք ըստ տարիների կազմում են մշակված վարելահողերի 21.2%, 35.2%, 40.0%, 44.5% և 42.4%-ը: Այսինքն՝ մշակելի մակերեսներից այդքան վարելահողեր չեն մշակվել, ծառայել են որպես խոտհարք, իսկ դրանից շատ ավելի մեծ մակերեսներ օգտագործվել են որպես արոտներ:

Լոռվա մարզի տարածքի մեծ մասն ունի ծայրաբեկորավոր և ծայրավոր երկրաբանական կառուցվածք, որտեղ ապարները ջրամերժ են և դրա շնորհիվ ավելի հաճախակի ու հավանական են մակերևութային մեծ հոսքերի առաջացումը: Լիթոգեն հիմքի այդ առանձնահատկության հետ միասին լանջերի մեծ թեքությունը և անտառահատումները առանձնակի նպաստավոր պայմաններ են ստեղծում ողողումների, սելավների, սողանքների և հատկապես հողի էրոզիայի զարգացման համար: Ի լրումն այդ ամենի, էրոզիային նպաստող կարևոր գործոն է դառնում արոտավայրերի չհամակարգված օգտագործումը, որի հետևանքով առավել մասշտաբային են դառնում էրոզիայի օջախները:

Այս վտանգավոր երևույթի դեմ պայքարի համար առանձին միջոցառումներն այլևս բավարար չեն՝ մարզի նման տարածքների (հատկապես Սպիտակի տարածաշրջանի) համար: Հողերի դեգրադացումը նվազեցնելու և էրոզիան կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր կազմակերպչական-պաշտպանական միջոցառումներ: Այդ նպատակով կարիք կա ուժեղացնել վերահսկողությունը հողերի նպատակային օգտագործման նկատմամբ, մշակովի հողատարածքներում անհրաժեշտ է վերահսկել հողի մշակման ագրոտեխնիկական կանոնների պահպանումը:

Որպես գործնական հակաէրոզիոն միջոցառում, պահանջված է հողապաշտպան անտառաշերտերի ստեղծումը: Առանձին խումբ միջոցառումներ է պահանջվում իրականացնել խախտված ու աղտոտված հողերի վերակուլտիվացման համար:

Բնապահպանական պահանջներից ելնելով՝ ինամքի ու հսկողության կարիք ունեն բնական լանդշաֆտները: Մասնավորապես՝ ծանրաբեռնվածության կարգավորման կարիք ունեն

արոտավայրերը, ընդ որում՝ անհրաժեշտ է բացառել գյուղատնտեսական կենդանիների մուտքը անտառային տարածքներ:

2.3.5 Անտառների պահպանության խնդիրները

ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101,277 հա, որից անտառածածկ է 85,799 հա: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալտնտեսական, գիտական բարձր արժեք և այլն են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Անտառկազմող հիմնական ծառատեսակները Հայաստանին բնորոշ չորս տեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, ուղեկցողները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին:

Հատկապես 1991-2000թթ. վառելափայտի և շինափայտի ստացման համար ապօրինի ծառահատումների հետևանքով մերկացել են անտառապատ լեռնալանջերի բազմաթիվ հեկտարներ: Սերմնային ծագման անտառների տարածքները պակասել և փոխարենը ավելացել են կոճղաշիվային ու երկրորդական տեսակի ծառաթփատեսակները: Լեռնային ռելիեֆ ունեցող մեր բնաշխարհի համար այս երևույթները խիստ զգալի և անցանկալի են:

Բացառապես բնապահպանական նշանակության այդ անտառները հատումների պատճառով կորցնում են իրենց կլիմայակարգավորիչ, հակաեռոզիոն, ջրակարգավորիչ դերը մեծ թեքության լանջերին՝ սկիզբ դնելով Էրոզիայի և հողի կորստի: Խաթարվել են նաև անտառների բնական վերածի պայմանները, և առանց անտառվերականգնման աշխատանքների հնարավոր չէ դրանց վերադարձը նախկին վիճակին:

Մարզում լայնածավալ անտառտնկման, խնամքի և այլ աշխատանքներ են իրականացնում «Հայաստան» ՊՈԱԿ-ի՝ Գուգարք, Եղեգնուտ, Լավար, Դսեղ, Վանաձոր, Թումանյան, Ջիլիգա, Տաշիր և Ստեփանավան անտառտնտեսությունները, ինչպես նաև «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը, «Մայ Ֆորեսթ Արմենիա» ՀԿ-ն, «Թեղուտ» ՓԲԸ-ն, «Բնության համաշխարհային հիմնադրամի» (WWF) հայաստանյան մասնաճյուղը, «Կանաչագարդ երկիր» ՀԿ-ն և այլն:

Անտառների վերականգնման, լրացման և նոր տնկարկների հիմնադրման նպատակով մարզի անտառտնտեսություններում նոր տեխնոլոգիաներով գինված տնկարանային տնտեսություններ հիմնելու կարիք կա: Սակայն խնդրի լուծման գործում կարևոր դեր ունի համայնքային, և հատկապես, մասնավոր անտառների հիմնումը, որի համար այս մարզում ևս միևնույն կարանների հիմնումը կարող է արմատական բարելավում ապահովել:

Մարզում համայնքային անտառների ստեղծման գործում խոշոր ներդրում ունի «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը: 2009-2012թթ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզի Սպիտակ, Կաթնաջուր, Արջուտ, Ֆիոլետովո, Ծաղկաբեր, Ջրաշեն, Դուրսալի, Սվերդլով և Կողես համայնքներում շուրջ 450 հա տարածքում իրականացրել է, անտառտնկման, ցանկապատման և հիմնադրված անտառմշակույթների լրացման ու խնամքի աշխատանքներ, որոնք շարունակական են: Անտառտնկման աշխատանքներից բացի, հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ: 2018-2019թթ. «Էյ-Թի-Փի»-ի ծրագիրն ընդգրկել է նաև Ազնվածոր, Բովածոր, Ուռուտ և Պրիվոլնեյե համայնքները:

2.3.6 Ընդերքի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրները

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում: Օգտակար հանածոները ներկայացված են հիմնականում ինտրուզիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով, իսկ մետաղական հանածոներից՝ պղինձ, մոլիբդեն, ոսկի:

Մարզի տարածքում հանքարդյունահանման իրականացման իրավունք ունեն շուրջ 50 կազմակերպություններ (5-ը մետաղական՝ Ալավերդու, Շամլուղի, Մղարթի և Արմանիսի, Թեղուտի մետաղական հանքավայրեր շահագործող):

Երկրաբանահետախուզական և արդյունահանման ծավալների աճը անխուսափելիորեն բնապահպանական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրներ են ստեղծում, ինչը ստիպում է, հաշվի առնել բոլոր ռիսկերը և ընդերքօգտագործման թույլտվություններ և լիցենզիաներ հատկացնել միայն հիմնավորված դեպքում:

Որպես ընդերքօգտագործման առկա խնդիր՝ մարզում (ինչպես և հանրապետության մյուս մարզերում) հանքավայրերի, լեռնահարստացման ֆաբրիկաների, մետաղածուլական գործարանի և վերամշակման արտադրամասերի փակ համակարգի, երկրորդային հումքի վերամշակման և անթափոն արտադրությունների մակարդակը ցածր է: Շինանյութերի արտադրության ոլորտում ակնառու է ձեռնարկությունների տեխնիկական զինվածության անբավարարությունը, սարքավորումների ֆիզիկական և բարոյական մաշվածությունը:

Որպես ոլորտի զարգացման հնարավորություն, մարզում առկա է լեռնաքիմիական հումք, ներկայացված՝ հանքային պիգմենտների (հանքային ներկերի), կվարցիտների և Պետրովկայի բարձր կալիումական տուֆերի հանքատեսակներով: Պիգմենտները և կվարցիտները, չնայած ունեն օգտագործման բավականին լայն ասպարեզ և շուկա, ներկայումս չեն շահագործվում, պայմանավորված արտահանման մեծ ծախսերով: Իսկ Տաշիրի բարձր կալիումական տուֆերից ստացվող էկոլոգիապես մաքուր, քլոր չպարունակող նոր տիպի սիլիկատային կալիումական պարարտանյութը չափազանց մեծ պահանջարկ ունի Հանրապետությունում և միջազգային շուկայում:

Բնապահպանական առումով ոլորտում նոր, ժամանակակից մոտեցումների կարիք կա, որի դեպքում հնարավոր կլինի լեռնահարստացման ֆաբրիկաների թափոնները՝ պոչանքը, վերածել արտադրանքի:

2.3.7 Կենսաբազմազանություն և կենսառեսուրսներ, հատուկ պահպանվող տարածքներ

Լոռվա մարզի բուսական աշխարհի տեսակային կազմը հարուստ է: Այստեղ հաշվառվում է գրեթե 1650 բուսատեսակ: Անտառների կազմում կան 150 ծառատեսակներ, մեծամասամբ՝ հազվագյուտ ու էնդեմիկ:

Հարուստ է մարզի կենդանական աշխարհը նաև արժեքավոր տեսակներով: «Շամլուղի լճակ»-ում առկա են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված Փոքրասիական տրիտոնի ռելիկտային պոպուլյացիաներ:

Մարզում գրանցված արգելավայրերը և դրանցում պահպանվող օբյեկտները ներկայացված են ստորև:

- Մարգահովիտի մեզոֆիլ անտառներ, տարածքը՝ 5,000 հա,
- Գյուլագարակի ռելիկտային սոճու անտառներ, տարածքը՝ 2,576 հա,

- Մրտավարդենու (ռեյիկտային մրտավարդի կովկասյան տեսակը), գտնվում է Ֆիոլետովո, Մարգահովիտ, Լերմոնտովո և Շահումյան համայնքների հարակից տարածքներում, տարածքը՝ 10,000 հա:

Մարզում գործում են նաև ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությամբ գործող 3 դենդրոպարկ և 1 բուսաբանական այգի.

- Վանաձորի բուսաբանական այգի, տարածքը - 12 հա, 1,000-ից ավելի ծառերի և թփերի տեսակներով, որոնցից 75-ը փշատերև,
- Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ,
- Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկ,
- Ախթալայի դենդրոպարկ, որն օգտագործվում է որպես քաղաքային այգի:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցանկում, Լոռու մարզից ընդգրկվել են 9 բնության հուշարձաններ՝ 165 հա ընդհանուր մակերեսով: Մասնավորապես տվյալ ցանկում ընդգրկվել է «Քոչաքարի մրտավարդ» բնության հուշարձանը՝ 150.0 հա տարածքով, որը գտնվում է Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառապետության բարձրադիր գոտում, Մարգահովիտ համայնքի վարչական տարածքում:

Այդուհանդերձ՝ ներկայումս առկա են բուսական և կենդանական աշխարհի անցանկալի փոփոխություններ և որոշ արժեքավոր տեսակների խստա վերացման վտանգ: Այս նկատառումով արգելավայրերի վիճակը պարզելու ուղղությամբ կարիք կա իրականացնել գիտական լուրջ ուսումնասիրություններ և համապատասխան միջոցառումներ:

2.3.8 Այլընտրանքային Էներգիայի օգտագործման և Էներգախնայողության ննդիրները

Էներգախնայողության և այլընտրանքային Էներգիայի անցման առումով Լոռու մարզում ևս նկատելի են ակտիվացումներ, սակայն դրանք դեռևս խիստ սահմանափակ ծավալներ են ընդգրկում: Հիմնականում դրանք արտահայտվում են սահմանափակ թվով արևային ջրատաքացուցիչների, ջեռուցման համակարգերի, ֆոտովոլտային կայանների տեղակայումով:

Մինչդեռ, մարզում առկա է հողմային և հիդրո էներգետիկայի զարգացման մեծ պոտենցյալ: Սպիտակ քաղաքն ընդգրկված է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Վերականգնվող Էներգիայի և Էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Սպիտակ և Վայք քաղաքներում» ծրագրում, որի արդյունքում քաղաքի 27 բազմաբնակարան շենքերի տանիքներին կտեղադրվեն արևային մարտկոցներ, կիրականացվեն Էներգախնայողության միջոցառումներ: Նման ծրագրեր են մեկնարկել նաև մարզի Ստեփանավան, Ալավերդի քաղաքներում և Մեծ Պարնի համայնքում:

Որպես հանրապետության անտառային զգալի մակերես ունեցող մարզ, Լոռու տարածքում ևս վառելիքայտի պահանջով անտառը մարդածին ծանրաբեռնվածություն է կրում: Մարզում, անտառների պահպանության և բնապահպանական համալիր պահանջից ելնելով, կարևորվում է վերականգնվող այլընտրանքային Էներգիատեսակների լայն կիրառումը:

ՄԱԿ-ի համաֆինանսավորմամբ նույնպես որոշ համայնքներում կիրառվում են արևավոլտային կայանների տեղադրում, ջրային ռեսուրսների կայուն կառավարում: